«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի զարգացման գործում

Առարկան՝ Ինֆորմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Անդրեասյան Մելանյա

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Հովհ. Թումանյանի անվան հ.2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ……2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3

Մաս 1

1.1 ՏՀՏ-ՆԵՐԻ ԴԵՐԸ և ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ……4

1.2 ՏՀՏ –ՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ……5

1.3 ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ……..7

Մաս 2

2.1 ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ……9

2.2 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԶԵՐԾ ՊԱՀԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ և ՎՆԱՍԱԿԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻՑ…….....11

2.3 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ……12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……14

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ……15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը հնարավոր է իրականացնել նաև ինֆորմատիկա առարկայի ընթացքում: Այս երևույթը խիստ կարևոր և թե՛ անհատի, թե՛ հասարակության համար: Հարկավոր է գիտակցել, որ դպրոցի առաջնային առաքելությունն է կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունը, ուստի այդ գործընթացը պետք է լինի շարունակական: Ուսուցիչն իր անցած ճանապարհի և աշխատանքի շնորհիվ դասավանդման կատարյալ արվեստի է տիրապետում: Ուսուցչից պահանջվում է լավագույն մեթոդների կիրառմամբ աշակերտներին զինել, կրթել տարբական հմտություններով, որը հենք կհանդիսանա հետագայում, աստիճանաբար ստանալիք գիտելիքների համար: Կախված դասարանից, աշակերտի արձագանքից, ուսուցիչը պետք է ունենա մեծ թվով անակնկալների պատրաստի օրինակներ, որոնք պետք է կիրառի դասն ավելի հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար: Այդ ընթացքում սովորողը պետք է հասկանա, որ յուրաքանչյուր առարկա ունի ազդեցությունն և դեր սովորողի զարգացման գործում: Սակայն հարկ է փաստել, որ դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Ուստի և այս նպատակի համար պետք է խոսուն քայլեր կատարեն բոլոր մանկավարժական աշխատողները: Ինֆորմատիկայի ուսուցչի վրա ևս մեծ պատասխանատվություն է դրված՝ հաշվի առնելով ՏՀՏ-ների աննախադեպ աճն ու հասանելիությունը սովորողների համար: Ինֆորմատիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսուցման ընթացքում դասընթացի օգնությամբ նվազեցնել նորագույն տեխնոլոգիաների վատ ազդեցությունը սովորողների զարգացման և դաստիարակության մեջ: Ուստի կարևոր ենք համարում՝ այդ թվում և ինֆորմատիկայի ուսուցչի ջանքերը սովորողների մոտ ճիշտ արժեքային համակարգ ձևավորելու ճանապարհին: Այդ ընթացքում սովորողը պետք է զգա, որ ընդունված է կրթական միջավայրում, որտեղ ձևավորվում է նրա մտավոր, հոգևոր, բարոյական արժեքները և խրախուսվում է:

Գլուխ 1

1.1 ՏՀՏ-ՆԵՐԻ ԴԵՐԸ և ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՏՀՏ-ները ներկայումս ընդգրկվել են մարդկանց գործունեության բոլոր ոլորտներում, որոնցից զերծ չէ նաև կրթական ոլորտը, մասնավորապես դպրոցը: ՏՀՏ-ի ինտեգրումը դասապրոցեսին բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը: ՏՀՏ-ները ուսուցման պրոցեսը դարձնում են ավելի հետաքրքիր, բովանդակալից՝ ներկայացնելով անհրաժեշտ ինֆորմացիան ճիշտ ժամանակին: Իր հերթին կրթության արդիականացման ռազմավարությունը շեշտում է բոլոր մակարդակներում ուսուցման մեթոդներն ու տեխնոլոգիաները փոխելու, նրանց դերը մեծացնելու անհրաժեշտությունը, որոնք կազմում են տեղեկատվության վերլուծության, ինքնուսուցման, սովորողների անկախ աշխատանքը խթանելու գործնական հմտություններ և ձևավորում պատասխանատու ընտրության և պատասխանատու գործունեության փորձ:

Ժամանակակից ուսուցիչը պետք է հստակ հասկանա, որ երեխաները, որոնց ինքը պատրաստվում է սովորեցնել, ծնվել և դպրոց են եկել արդեն 21-րդ դարում, ինչը նշանակում է, որ նրանք մեծացել և ձևավորվել են բոլորովին այլ տեղեկատվական տարածքում, քան 80-90-ականների երեխաների սերունդները: Հասկանալի է, որ համակարգիչը դառնում է սիրված ժամանց, դպրոցականի կյանքի անբաժանելի հատկություն, իսկ երբեմն էլ, ցավոք, լավագույն ընկեր: Այսպիսով ակներև է ուսուցման գործընթացում ՏՀՏ-ի կիրառման անհրաժեշտությունը, սակայն հարկ է նշել, որ դրանց ոչ լիարժեք առկայությունը երբեմն բացակայությունը հանգեցնում է կրթության ոլորտում ՏՀՏ-ի պասիվ կիրառմանը: Տեխնիկական միջոցների սղությունը ուսուցիչների շրջանում հաճախ առաջացնում է ուսումնական մոտիվացիայի ցածր մակարդակ, որն էլ իր հերթին սպառնալիք է արդյունավետ դասապրոցեսի իրականացմանը: Արդյունքում առաջացնում է դպրոցականների տեղեկատվության և հաղորդակցական ունակությունների ձևավորման ցածր մակարդակ, բացասական տեղեկատվության հսկայական հոսքը, որը բացասաբար է անդրադառնում աշակերտների անհատականության ձևավորման վրա, ինչպես նաև անհրաժեշտ, օգտակար տեղեկատվությունը գտնելու, մշակելու և օգտագործելու անկարողություն:

1.2 ՏՀՏ –ՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Տեղեկատվական հասարակության ձևավորումն ու զարգացումը ենթադրում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) լայն տարածումը կյանքի բոլոր բնագավառներում: Միևնույն ժամանակ, տեղեկատվությունը համարվում է կարևոր ռեսուրս, այդ տեխնոլոգիաներն էլ դառնում են բազային: Իսկ տեղեկատվական միջավայրը սոցիալական, տնտեսական, քաղաքական և էկոլոգիական միջավայրերի հետ միասին՝ նոր հասարակական միջավայր: Կարող ենք փաստել, որ ՏՀՏ-ների ներդրումը և կիրառումը կրթության ոլորտում տեղեկատվական հասարակության զարգացման կարևորագույն ուղղություններից մեկն է: Այն զգալիորեն արագացնում է գիտելիքների և մարդկության կուտակված տեխնոլոգիական և սոցիալական փորձի փոխանցումը ոչ միայն սերնդից սերունդ, այլև մեկից մյուսին:

Աշխարհում բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ ՏՀՏ-ների կիրառումը ուսումնական պրոցեսում ունեն դրական ազդեցություն, ինչը կարող է բարելավել սովորողների ցուցաբերած արդյունքները և բարձրացնել ուսուցիչների դասավանդման որակը: Ակներև է, որ հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլ նաև գիտակից քաղաքացի ձևավորելը, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Զարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառության այսօր գրեթե անհնար է հասնել այդ նպատակներին, քանզի երեխաների մի քանի սերունդ արդեն մեծացել է ՏՀՏ (տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների) միջավայրում և դրանց ակտիվ կիրառմամբ:

Կրթության ոլորտում և հենց կրթության հասկացության մեջ կատարվող ներկա փոխակերպումը ամենից ավելի հեշտ է նկարագրել կրթության միջավայրի կամ տեխնոլոգիական հիմքի փոփոխմամբ՝ որպես աստիճանական անցում տպագիր միջոցներից և դրանցով պայմանավորված մոդելից դեպի ժամանակակից ՏՀՏ-ի վրա հիմնվող կրթության համակարգեր: Արդի տեխնոլոգիաների նշանակության աճը և դրանց տիրապետելու անհրաժեշտությունը բերում են գրագիտության նոր, ավանդականից տարբեր հասկացություն, մեծ փոփոխության է ենթարկվում նաև սովորելու և սովորեցնելու բնույթը:

Միևնույն ժամանակ, կրթությունը ավանդական ձևից վերափոխվում է դառնալով հեռավար և նոր այլընտրանքներ է առաջարկում. հետզհետե փոխվում է կրթության կազմակերպման եղանակը, որը թույլ է տալիս անցում կատարել դեպի անսահմանափակ շարունակական կրթություն հեռավորության վրա:

Քանի որ մեր օրերում երեխաները շատ վաղ, դեռևս նախադպրոցական տարիքից են ընկղմվում ՏՀՏ աշխարհը: Կրթության մասնագետներն ու հետազոտողները տարբեր երկրներում ընդունում են, որ 21-րդ դարի երեխաների մոտ զարգացել է ինտուիցիան, և որ նրանց ճանաչողական ու զարգացման պրոցեսները տարբերվում են նախորդ սերունդներից: Այժմյան երեխաները ՏՀՏ-ի օգտագործումը ավելի հեշտությամբ են իրականացնում և քանի որ նրանց մտածողությանը այլ է, նրանք շատ ավելի արդյունավետ են օգտագործում ՏՀՏ-ը՝ որպես ապրելու, սովորելու ու շփվելու միջոց: ՏՀՏ-ի սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: ՏՀՏ-ը դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալման, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են ուսուցչների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը: ՏՀՏ-ն հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռքբերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ: Ի վերջո ՏՀՏ-ները թույլ են տալիս ուսուցչին ու աշակերտին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»:

«ՏՀՏ-ն ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցներին վերափոխել»:

1.3 ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ

Այժմ ներկայացնենք կրթության ոլորտում առավելագույնս շատ օգտագործված ՏՀՏ գործիքների դասակարգումը ըստ մեթոդական նպատակների ոլորտների՝

- **Կրթական**: Նրանք հաղորդակցվում են գիտելիքներին, ձևավորում հմտություններ գործնական կամ կրթական գործունեության մեջ՝ ապահովելով նյութի յուրացման պահանջվող մակարդակը:
- **Տեղեկատվության որոնում**: Տեղեկատվություն տրամադրեք տեղեկատվության համակարգվածության վերաբերյալ:
- **Ցուցադրություն:** Ուսումնասիրված երևույթները, գործընթացները, առարկաները պատկերացվում են ՝ իրենց ուսումնասիրության և ուսումնասիրության նպատակով:
- **Իմիտացիա:** Դրանք ներկայացնում են իրականության որոշակի կողմ, որը թույլ է տալիս ուսումնասիրել դրա ֆունկցիոնալ և կառուցվածքային բնութագրերը:
- **Լաբորատորիա:** Թույլ է տալիս փորձեր կատարել առկա սարքավորումների վրա:
- **Մոդելավորում**: Դրանք հնարավոր են դարձնում օբյեկտի մոդել, ֆենոմեն՝ այն ուսումնասիրելու և ուսումնասիրելու նպատակով:
- **Ավտոմատացում**: Ավտոմատացնել հաշվարկները և մի շարք սովորական գործողություններ:
- **Կրթական և խաղային:** Նախատեսված է ուսման իրավիճակ ստեղծելու համար, որի ընթացքում վերապատրաստվողների գործունեությունն իրականացվում է խաղային եղանակով:

Կան բազմաթիվ տեխնոլոգիական լուծումներ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցիչներին կախված դասի տեսակից և ընտրված մեթոդից ուսումնական գործընթացը դարձնել ավելի հետաքրքիր և արդյունավետ: Բացի այդ, գիտական բազմաթիվ հետազոտություններ ապացուցել են, որ ՏՀՏ-ը ապահովում են կրթության մեջ հավասար և համընդհանուր ընդգրկում, բարձրացնում կրթական ծառայությունների մատուցման ճկունությունը՝ ապահովելով սովորողների ներառումն անկախ ժամանակային և աշխարհագրական խոչընդոտներից: Քանզի ՏՀՏ-ն այն լավագույն գործիքներից են, որոնք հեշտացնում են թե՛ ուսուցչի աշխատանքը, թե՛ աշակերտների՝ դարձնելով դասն առավել մատչելի, հետաքրքիր, կիրառական և աշակերտակենտրոն:

Ուսումնական գործընթացում առավել հաճախ օգտագործվող ՏՀՏ տարրերը ներառում են.

- ներկայացումներ/շնորհանդեսներ
- Համակարգչի և մուլտիմեդիա պրոյեկտորի միջոցով ցուցադրված դասագրքերի էլեկտրոնային հավելումներ
- թվային կրթական ռեսուրսներ
- ինտերակտիվ տախտակ
- DVD սկավառակներ նկարներով և նկարազարդումներով
- վիդեո և աուդիո սարքավորումներ

ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Սա երեխայի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում. դասարանում, շրջապատում կա մի բան, որ կախված է իրենից: Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5%-ը և տեսածի 20%-ը:

Տեխնոլոգիաները մեզ հնարավորություն են տալիս ուսումնական նյութը ներկայացնել զանազան ձևերով, և հենց դրանով է ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ դառնում: Ուսուցիչներն այս դեպքում խնայում են ոչ միայն ժամանակ, այլև հիմնարար, խորացված գիտելիք են տալիս աշակերտին, որը կպահպանվի հիշողության մեջ:

Մաս 2

2.1 ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

Ինչպես արդեն նշեցինք, սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործընթացը տեղի է ունենում ոչ միայն ընտանիքում, այլ նաև սոցիալական միջավայրում՝ մասնավորապես ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունն անխուսափելի է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է

արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Այստեղ կցանկանանք առանձնացնել դեռահասության տարիքի սովորողներին, որոնց հետաքրքրությունների շրջանակը կայուն չէ, ավելին՝ այն կարող է իր մեջ կրել բացասական էլեմենտներ: Ուստի հատկապես որոշ տարիքային խմբի սովորողների հետ հարկավոր է ցուցաբերել անհատական մոտեցում: Այսպես դեռահասի մոտ ձևավորվում է վստահություն դեպի ուսուցիչը և անուղղակի կերպով ուսուցչի համար դառնում հեշտ կառավարելի: Նշել էի, որ ինֆորմատիկայի դասաժամը նույնպես լավ հնարավորություններ է տալիս ուսուցչին դրական արժեքներ սերմանել սովորողի մոտ: Այս առարկայի դասերին ուսուցիչը պետք է համագործակցային հարաբերությունների միջոցով նախ և առաջ ձևավորի գիտական աշխարհայացք և ստեղծագործական մտածողություն: Իսկ ահա դասաժամի պրակտիկ ուղղվածությունը ձևավորում է ստացված գիտելիքներն ու հմտությունները առօրյա կյանքում օգտագործելու կարողություն:

Ինֆորմատիկա առարկայի դասավանդման շրջանակներում դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի վրա: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների տիրույթը պետք է հագեցած լինեն: Ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը շատ առումներով կապահովի ուսուցչի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը: Կարևոր է սովորողներին ծանոթացնել զարգացած մարդու մտածողությանը, աշխատանքի արդյունքները մարդկանց պրակտիկ կարիքներին ծառայեցնելու նրանց ձգտմանը, նրանց բարձր քաղաքացիականությանը, ձևավորել պատկերացումներ անձի բարոյական հիմքերի առաջնահերթության մասին: Դպրոցում պետք է ձևավորվի սովորողների ռազմահայրենասիրական, գեղագիտական, հոգևոր դաստիարակության հիմքերը, որը պետք է հիմք դառնա հուզական արժեքային մտածողության համար:

Վերջին երկու տասնամյակում հայ իրականության մեջ արժեքների փոփոխությունները շարունակական բնույթ են կրում։ Այս գործընթացը մեծապես պայմանավորված է տարբեր տեղեկատվական հոսքերով, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, համաշխարհային տեղեկատվական միջավայրի ձևավորմամբ։

2.2 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԶԵՐԾ ՊԱՀԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ և ՎՆԱՍԱԿԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻՑ

Ինֆորմատիկայի ուսուցիչը, պայմանավորված տեղեկատվական հոսքերի ակտիվությամբ, այս համատեքստում ունի նաև այլ տեսակի առաքելություն։ Պետք է անպայման սովորողին զերծ պահել վտանգավոր ու կործանիչ համացանցային հարթակներից՝ շատ դեպքերում ուղիղ ցույց տալով դրանց վնասակար ազդեցությունները մարդու կյանքի, անվտանգության վրա։ Օրինակ՝ վտանգավոր հարթակ հանդիսացող «Синий кит» խաղը , ստիպում ՝ դեռահասներին ինքնասպանություն գործել։ ՀՀ-ում ևս գրանցվել են նմանօրինակ դեպքեր, ուստի շատ կարևոր է, որ ինֆորմատիկայի դասաժամին առարկայից ստացած խորքային գիտելիքն ուսուցչի անմիջական վերահսկողությամբ ուղղորդվի։ Այդ գիտելիքները պետք է կիրառվեն ինտեգրված դասերի կամ այլ արդյունավետ գործունեության համար։ Ուսուցիչը պետք է սովորողներին ուղղորդի ինչպես պաշտպանվեն կիբեռհետապնդման դեպքերում. ինչպես ապաակտիվացնել և փակել տվյալ սպառնացող աղբյուրի հետ հաղորդակցման աղբյուրները։

Այս պարագայում սովորողների հետաքրքրությունների ուսումնասիրությունը, ժամանակին ստեղծված հետադարձ կապը թույլ կտա հստակեցնել սովորողի համար գերակա արժեքներն ու կողմնորոշել դրանք դեպի բնականոն զարգացում։ Ուսուցիչը պետք է համացանցը ճիշտ օգտագործելու համար՝սովորողներին ուղղորդի նախագծերի կամ սոցիալական աշխատանքների ստեղծման ուղղությամբ, որոնք ներբեռնելով համացանց՝ կհամախմբեն այլ մարդկանց՝ դրական նպատակների և գործողությունների իրականացման համար։

2.3 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ

Անդրադառնալով տեղեկատվական տեխնոլոգիաներին՝ չենք կարող շրջանցել սոցիալական ցանցերի ազդեցությունը սովորողների վրա: Այս հետաքրքրությունը աննախադեպ աճ է գրանցել ՀՀ-ում և ողջ աշխարհում, սակայն դրանց մի քանի տեսակներն (օրինակ՝tik tok, instagram, twitter, telegram) իրենց բովանդակային ու տեսողական առանձնահատկություններով կործանարար ազդեցություն են ունենում սովորողների հոգեկերտվածքի, արժեքային համակարգի ու հետաքրքրությունների ձևավորման վրա: Սա վերածվել է կախվածության, որը ոչ մի դրական բան չի պարունակում, որևէ ուսուցողական գործառույթ չի իրականացնում: Ուստի, կարծում ենք, այդ հորինված իրականությունը խարխլում է հայեցի մտածելակերպը, ջնջում բոլոր կարմիր գծերը, ինչն անթույլատրելի է: Այս պարագայում ևս կարելի է հույս դնել ինֆորմատիկայի ուսուցչի վրա: Սոցիալական ցանցերի օգտագործումը ազդում է դեռահասների վարքի վրա:Սոցիալական ցանցերից օգտվող դեռահասները ավելի հաճախ են առողջության համար վտանգ պարունակող պահվածք դրսևորում :

Ի վերջո չպետք է մոռանալ, որ **ինֆորմատիկան ուսումնասիրում է ինֆորմացիայի ստացման, մշակման, պահպանման և փոխանցման գործընթացն ու դրան ուղղված մեթոդներն ու միջոցները, ուսումնասիրում է ինֆորմացիայի և հաշվարկման տեսական հիմունքները եւ համակարգչային համակարգերում նրանց իրականացման ու գործածման կիրառական միջոցները**: Այս տեսակետից մեծ նշանակություն կարող է ունենալ ինֆորմատիկայի ուսուցչի մանկավարժական խորհրդատվությունը սովորողին, քանի որ արգելել ուսուցիչը իրավասու չէ, կարող է բացառապես ուղղորդել: Կրթության նոր հայեցակարգի մշակման տեսանկյունները վերաբերում են ուսուցչի և աշակերտի փոխգործակցության ձևերին, սովորողի արժեքային համակարգի ձևավորմանը, նրա իրականացման միջոցներին և եղանակներին: Ուսուցման ավանդական համակարգում առկա են ոչ միայն առարկայական, մանկավարժամեթոդական, այլև դաստիարակչական հիմնախնդիրներ: Խոսելով դաստիարակչական հիմնախնդիրների մասին՝ նշենք, որ ներկայումս դրանք առավել սուր բնույթ են կրում: Դա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից պայմաններում երեխայի մանկությունն ընթանում է այնպիսի սոցիումում, որին բնորոշ են արժեքային սնակությունը, հստակ նպատակային կողմնորոշիչների բացակայությունը, սոցիալական շերտավորումների խորացումը, մանկական և

պատանեկան միջավայրերում ձևավորվող կոնֆլիկտները, ընտանեկան դաստիարակության բացթողումները։

Այսուհետ, կարող ենք փաստել, որ հասարակության կորիզը՝ առողջ արժեհամակարգ ունեցող, մարդասեր ու կառուցողական քաղաքացին է։ Կարծում ենք՝ ուսումնադաստիարակչական գործընթացում ուսուցիչները գործի են դնում իրենց ողջ ներուժը , որպեսզի մեր երկրի ապագա քաղաքացին լինի հենց այդպիսին։

Այդ աշխատանքը մեծ չափով կօգնի մեզ մանկավարժական հետագա գործունեության ընթացքում, որպեսզի էլ ավելի կառուցողական մոտենանք սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորմանը։

Եզրակացություն

Մանկավարժական գործունեության ամբողջ ընթացքում մշտապես փորձել եմ քայլել ժամանակին համընթաց՝ անընդմեջ կրկնելով և վերստին սովորելով, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանը նոր թափ է հավաքում և դառնում կենսակերպ՝ ընդգրկելով կյանքի բոլոր ոլորտները:

Եթե նախկինում մանկավարժների համար դժվար էր գտնել անհատական մոտեցում ամեն աշակերտի համար, ապա ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է դիտողականության բարձրացմանը, թույլ է տալիս ուսուցչից աշակերտին գիտելիքների փոխանցման ժամանակ նշանակալից ձևով մեծացնել ուշադրությունը, հիշողությունը: Այժմ դպրոցները ՏՀՏ-ի կիրառմամբ ստացել են հնարավորություն մատուցելու նոր ինֆորմացիան այնպես, որ բավարարեն յուրաքանչյուր աշակերտի անհատական պահանջները: ՏՀՏ-ի կիրառմամբ աշակերտների կողմից կատարված հետաքրքիր և հետազոտական աշխատանքները թույլ են տալիս ակտիվորեն ներգրավել նրանց դասապրոցեսի կազմակերպման մեջ: Դրանք ժամանակ են խնայում դասի ընթացքում, հնարավորություն են տալիս նյութի մեջ խորությամբ ընկղմվելու, ստեղծում են սովորելու համար ավելի մեծ մոտիվացիա:

Այժմ նշեմ մի քանի կարևոր արձանագրումներ.

- Ուսուցիչը պետք է ունենա բարձր արժեքային համակարգ և սեփական օրինակով պետք է սովորողների մոտ ձևավորի բարձր արժեքային համակարգ:
- Ուսուցիչը պետք է կարողանա սովորողներին հետ պահել վնասակար և վտանգավոր հարթակներից և սոցալական ցանցերից:
- Ուսուցիչը պետք է սովորողների հետ լինի ազնիվ, որպեսզի ապահովի հետադարձ կապը ուսման գործընթացում:

Ելնելով հետազոտական աշխատանքի արդյունքներից, եկա այն եզրակացության, որ պետք է արժևորել անձի արժանիքները, հարգել մարդու ազատությունները և իրավունքները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած արձանագրումները՝ ներկայացնում եմ մի քանի առաջարկություններ.

1. Առաջարկում եմ, որ դառահասների տարիքային խմբում հատկապես նպատակահարմար է սովորողին ներգրավել մի շարք ճանաչողական, ուսումնադաստիարակչական ու հայրենասիրական միջոցառումների մեջ՝ դաստիարակելու համար բարձր մարդկային որակներ։

2. Կարծում ենք՝ սովորողների համար հարկավոր է հաճախակի կազմակերպել այցելություն թանգարաններ, թատրոններ, ինչպես նաև հանդիպումներ հայտնի մարդկանց հետ, որը կմոտիվացնի սովորողին նմանվել անվանի մարդկանց և կնպաստի բարձր արժեքներ ձևավորել վերջիններիս մոտ։

3. Ցանկալի է, որ դասերի ընթացքում սովորողի համար դրվեն այնպիսի խնդիրներ, որոնք կստիպեն վերջինիս մտածել, լուծումներ գտնել ինքնուրույն: Այսպես կարելի է բարձրացնել սովորողի աշխատունակությունն ու հիմք նախապատրաստել մետաճանաչողության զարգացման համար:

4. Սովորողին ինքնուրույնություն տալով՝ մենք ապահովագրում ենք նրա բարեկեցիկ ապագան, ուստի աշակերտակենտրոն աշխատելաոճը պետք է գերակայի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ա. Մ. Զադոյան «Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում» Երևան 2014։

- Ի. Փարեմուզյան «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում»։

- «Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար» Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան։

- «Երեխաների առցանց անվտանգության ապահովումը» ՀՀ Կրթության և գիտության նախարարության ուղեցույց ծնողների համար։